

«ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ՝
ՀԱՄԱՍԻ ԿՈՂՄԵ ՅԱՆՁՆՈՒՄԸ 4-ԲԴ ԴԻԱԿԸ
ԶԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՐ ԳԵՐԻՆԵՐԵՆ ՌԵԷ ՄԵԿՈՒՆ»

Կ'ԸՍԵ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ

Իսրայելեան բանակը յայտարարեց, թէ դատաբժշկական փորձաքննու-թիւնը հաստատած է, որ Զամաս շարժումին յանձնած չորս դիակներէն մէկը չի համապատասխաներ իսրայելացի գերիներէն ռեւէ մէկուն:

Իսրայելեան բանակը իր հրապարակած հաղորդագրութեան մէջ անել-ցուց, որ Զամաս անհրաժեշտ ամէն ջանք պէտք է թափէ գերիներու դիակնե-րը վերադարձնելու:

ՆԵԹԱՆԻԱԶՈՒ. «ԵԹԷ ԿԱԶԱՅԻ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱԺԻՆԸ ԽԱՂԱՂ ԿԵՐՊՈՎ
ԶԳՈՐԾԱՂՐՈՒԻ, ԴժՈՒՔԻ ԴՈՆԵՐԸ
ՊԻՏԻ ԲԱՅՈՒՆ»



Իսրայելի վարչապետ Պենիամին Նեթանիահու ամերիկեան «Սի.Պի.Էս. Նիուզ» պատկերասփիւռի կայանին հետ գրոյցի ընթացքին յայտարարեց. «Հա-մաձայնութիւն գոյացուցինք խաղաղութեան առիթ ընծայելու, եւ ծրագիրին քսան կէտերը չափազանց յստակ են»:

«Հարցը միայն գերիներու վերադարձին չի վերա-բերիր, այլ անոր կը յաջորդէ նաեւ զինաթափումը եւ զինուորական ներկայութեան վերացումը», նշեց ան: «Համաձայնութիւն գոյացուցինք ծրագիրին առա-ջին մասը գործադրելու եւ անոր երկրորդ բաժինի խաղաղ գործադրութեան առիթ ընծայելու», նշեց Իսրայելի վարչապետը:

«Եթէ երկրորդ բաժինը խաղաղ կերպով չգործադրու-ի, ապա լսեցի Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի խօսքը, թէ դժոխքի դռները պիտի բացուին», արեւելցեց Նեթանիահու:

ՀԱՄԱՍՆ ՈՒ ԻՍՐԱՅԷԼԸ ԿԸ ՍԿՍԻՆ
ԹՐԱՍԹԻ ԾՐԱԳԻՐԻՆ ՇՈՒՐՁ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ 2-ԲԴ ՓՈՒԼԸ



Եգիպտոսի մէջ սկսած է Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի Միջին Արեւելքի ծրա-գիրին շուրջ բանակցութիւններու յաջորդ փուլը, որ կը կեդրոնանայ Զամասի զինաթափման, Կազայի պատերազմէն ետք կառավարման եւ արաբական խաղաղապահ ուժերու մասնակցութեամբ շրջանի անվտանգութեան վրայ:

Առաջարկները կը ներառեն Եգիպտոսի եւ Յորդա-նանի կողմէ կազմուած հազար հոգիներ պաղեստինե-ան ոստիկանական ուժերու ստեղծում՝ մինչեւ 10 հազար մարդ ընդգրկելու կարելիութեամբ:

Բայց եւ այնպէս, լուրջ դժուարութիւններ կը մնան. Իսրայելն ու արաբական երկիրները կը զգու-շանան բռնազրաւողի դերի մէջ յայտնուելէ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀՈՎՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ
ՄԵԿՆԵՑԱԻ ՔԱՆԱՏԱ ԵՒ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Երկուշաբթի, 13 հոկտեմբեր 2025-ին, Արամ Ա. կաթողիկոս, հովուապետական այցելութեամբ մեկ-նեցաւ Զանաթա եւ Ամերիկայի Միացեալ Նահանգ-ներ: Վեհափառ հայրապետին հովուապետական այ-ցելութիւնը պիտի ընդգրկէ Զանաթայի հայոց թեմը, ինչպէս նաեւ հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նա-հանգներու Արեւելեան ու Արեւմտեան հայոց թեմե-րը: Յիշեալ թեմերուն մէջ վեհափառ հայրապետը յա-ջորդաբար պիտի այցելէ Մոնրեալ, Թորոնթօ, Լոս Ան-ճելէս, Ֆրեզնօ, Սան Ֆրանսիսքօ, Նիւ Եորք, Նիւ Ճըր-զի եւ այլ շրջաններ:

Վեհափառ հայրապետին հովուապետական այ-ցելութեան օրակարգը պիտի ներառէ եկեղեցական արարողութիւններ, ազգային մարմիններու հետ հանդիպումներ, երիտասարդութեան հետ երկխո-սութիւն, միջեկեղեցական հանդիպումներ, համա-լսարաններու մէջ դասախօսութիւններ, կրթական մշակներու հետ հանդիպումներ, ինչպէս նաեւ վեհա-փառին հայրապետական ընտրութեան ու գահակա-լութեան 30-ամեակի նշում:

Շար.ը՝ էջ 8

ԹՐԱՍԹ. «ՀԱՄԱՍ ՊԻՏԻ ՀՐԱԺԱՐԻ
ԻՐ ՉԷՆՔԷՆ, ԵՒ ԵԹԷ ԶՀՐԱԺԱՐԻ,
ՄԵՆՔ ԶԱՅՆ ՊԻՏԻ ԶԻՆԱԹԱՓԵՆՔ»

Միացեալ Նահանգնե-րու նախագահ Տանըլտ Թրամփ յայտարարեց, թէ Զամաս պիտի հրաժարի իր զէնքէն, եւ եթէ այդ մէկը չկատարէ, «մենք զայն պի-տի զինաթափենք, եւ զի-նաթափումը տեղի պիտի ունենայ արագ կերպով եւ թերեւս բռնի ուժով»:

Թրամփ Ձուածէ գրա-սենեակին մէջ լրագրողնե-րուն յայտնեց. «Զամաս կարգ մը անգալակախումբեր ոչնչա-ցուց, եւ ասիկա ինձի մեծ անհանգըս-տութիւն չի պատճառէր»:



«Միջին Արեւելքի մէջ խաղաղու-թեան փափաքի մակարդակին նմանը չտեսայ», արեւելցեց ան:

Շար.ը՝ էջ 8

ՔՐԵՄԼԻՆԻ ՄԷՋ ՓՈՒԹԻՆ-ՇԱՐՅ
ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Զրեմ-լինի մէջ ընդունեց Սուրիոյ նախագահ Ահմետ Շարիը:

Փութին հանդիպումի ընթացքին նշեց.

«Ռուսիոյ եւ Սուրիոյ մի-ջեւ գործակցութիւնը լաւ արդիւնքներ պիտի տայ»:

«Երկու երկիրներու միացեալ յանձնախումբը

պիտի շարունակէ աշխա-տանքը, եւ մենք պատրաստ ենք շարք մը ծրագիրներ իրականացնելու», նշեց Փութին:

Նախքան այդ, «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը երէկ հաղորդեց, որ Սուրիոյ նախագահ Ահմետ Շարի Մոս-կուա այցելութեան ընթացքին պաշտօ-նապէս Ռուսիոյ պիտի դիմէ Սուրիոյ նախկին նախագահ Պաշշար Ասատը արտայանձնելու համար՝ տուրիացիներու դէմ կատարուած յանցագործու-թիւններու համար դատուելու նպա-տակով:



կուա այցելութեան ընթացքին պաշտօ-նապէս Ռուսիոյ պիտի դիմէ Սուրիոյ նախկին նախագահ Պաշշար Ասատը արտայանձնելու համար՝ տուրիացիներու դէմ կատարուած յանցագործու-թիւններու համար դատուելու նպա-տակով:

Շար.ը՝ էջ 8

ՀԵԿՍԵԹ. «ԵԹԷ ՈՒՔՐԱՆԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՍԸ
ԶԱՒԱՐՏԻ, ՄԵՆՔ ՈՒ ՄԵՐ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ
ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԶՍՊՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ»

Միացեալ Նահանգնե-րու պատերազմի նախա-րար Փիթ Զեկսթը յայտա-րարեց. «Ժամանակն է վերջ տալու Ուքրանիոյ պատերազմին, եւ եթէ չա-ւարտի, Միացեալ Նա-հանգներն ու անոնց դաշ-նակիցները պատրաստ են զգալու կատարելու»:

Ըստ անոր, Ուաշինկ-թընն ու անոր դաշնակից-ները «անոր շարունակ-ւող յարձակումին պատճառով Ռուսիոյ գին պարտադրելու» անհրաժեշտ քա-լերը պիտի որդեգրեն:

Զեկսթը ՕժԷՄ-ի նստավայրին մէջ ժողովի ընթացքին նշեց. «Եթէ պէտք է



այդ քայլը որդեգրենք, ապա Միացեալ Նահանգներու պատերազմի նախա-րարութիւնը պատրաստ է իր դերը կա-տարելու այնպիսի ձեւով, որ միայն Միացեալ Նահանգները կրնան ընել»:

«ԱՆԿԱԽՆԵՐ ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ»
ՀԱՆԴԻՊՄԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ
Կ'ԱՅՅԵԼԷ «ՇԱՂՁՈՅԵԱՆ» ԿԵԴՐՈՆ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմի-տէի ներկայացուցիչ Ալպեր Պալապա-նեան ընդունեց «Անկախներ Լիբանանի համար» հանդիպման պատուիրակու-թիւնը՝ գլխավորութեամբ Բաֆֆի Մա-տեանի, չորեքշաբթի, 15 հոկտեմբեր

2025-ին, «Շաղգոյեան» կեդրոնի մէջ, ներկայութեամբ Կեդրոնական կոմի-տէի քարտուղար Ճորճ Գրիգորեանի եւ անդամ՝ նախկին նախարար Աւետիս Կիտանեանի:

Շար.ը՝ էջ 2

ԿԱԼՈՒԶԻՆ. «ՊԱՔՈՒԻ ԵՒ ԵՐԵՒԱՆԻ
ՄԻՋԵՒ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ
ՊԷՏՔ Է ՍՏՈՐԱԳՐՈՒԻ ՄՈՍԿՈՒՄՅԻ ՄԷՋ»



Երեւանին եւ Պաքուին խաղաղութեան համաձայ-նագիրի ստորագրման հարթակ տրամադրելու վե-րաբերեալ Ռուսիոյ առաջարկը կը մնայ ի գորու: Այս մասին յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սիլախիլ Կալուզին:

«Ակնյայտ է, որ մեր ծրագիրները կեանքի կոչելու համար տակաւին շատ ընտելներ կան: Մենք պատ-րաստ ենք Երեւանին եւ Պաքուին տրամադրել ան-հրաժեշտ ամբողջ օգնութիւնը՝ մնացած տարակար-ծութիւնները յաղթահարելու համար, ներառեալ Ռու-սիոյ, Հայաստանի եւ Ազրայէճանի ղեկավարներու եռակողմ յայտարարութիւններու համաձայն», ըսած է Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարարը:

Կալուզին ընդգծած է, որ Մոսկուան յատուկ նշա-նակութիւն կու տայ Երեւանի եւ Պաքուի միջեւ յարա-բերութիւններու կարգաւորման:

Դիւանագետը նաեւ նշած է Ռուսիոյ նշանակալի եւ արդիւնաւետ դերը երկու երկիրներուն միջեւ տագ-նապի լուծման գործին մէջ:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ԹԵՄԻ ԱՐԱՋՆՈՐԴԸ ԵՒ ԽՈՒՄԲ ՄԸ
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ



Երեկ ձերբակալուեցաւ Արագածոտնի թեմի Սաղ-մոսավանքի հոգեւոր հովիւ Փառէն քեյն. Առաքել-եան, բերման ենթարկուեցան շարք մը այլ հոգեւո-րականներ, որոնց կարգին՝ Արագածոտնի թեմի առաջնորդը:

Շար.ը՝ էջ 8

ՊԱՅՐԱՄՈՎ ԿՐԿԻՆ ԽՕՍԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ՄԷՋ «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒ» ՄԱՍԻՆ



Ազրայէճանի արտաքին գործոց նախարար Ճեյ-հուն Պայրամով ԵԱՀԿ-ի գործող նախագահ, Ֆին-լանտայի արտաքին գործոց նախարար Էլինա Վալ-թոնենի հետ Պաքուի մէջ հանդիպումի ընթացքին անդրադարձած է նաեւ Հայաստան-Ազրայէճան խա-ղաղութեան հուլովոյթին:

Պայրամով «ընդգծած է խաղաղութեան համա-ձայնագիրի ստորագրման ուղղութեամբ ձեռնարկը-ւելիք յաջորդ քայլերը եւ Հայաստանի Սահմանադ-րութեան մէջ Ազրայէճանի նկատմամբ տարածքային պահանջներու վերացման անհրաժեշտութիւնը»:

«Ազատութիւն» ձայնասփիւռի կայանը կը հաղորդէ, որ այս մասին նշուած է Ազրայէճանի արտաքին գոր-ծոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

Հաղորդագրութեան մէջ նաեւ կը նշուի, թէ կողմե-րը «դրական գնահատած են» որոշումի որդեգրումը կասեցնելու գործունէութիւնը ԵԱՀԿ-ի կառոյցներու՝ Մինսքի հովովոյթի, գործող նախագահի յատուկ ներ-կայացուցիչի եւ բարձր մակարդակի ծրագրաւորման խումբի, որոնք «կորսնցուցած են իրենց գործնական նշանակութիւնը»:

ՌԻԱԸՇԻ «ԼԻԲԱՆԱՆԻ
ԵՒ ԻՍՐԱԵԼԻ ՄԻՋԵՒ ՌՈՂԱԿԻ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԸՆԹԱՆԱՆ
ՊԵՐՐԻԻ ՀՈՎԱՆԱԴՈՐՈՒԹԵԱՄԲ
ԵՒ ՍԱԼԱՄԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ»

Դաշնակցային դրութեան տեւական համախմբումի ընդհանուր քարտուղար, «Նոր պահպանողական եր-Լիբանան» հարթակի համակարգող Ալֆրետ Ռիաշի նշեց. «Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ ուղղակի բանակցութիւնները կ'ընթանան ներկայութեամբ ՍԱԿ-էն ներկայացուցիչներուն, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի հովանաւորութեամբ եւ վարչապետ Նաուաֆ Սալամի համաձայնութեամբ»:

«Յըզպալլան կրնայ հետագային այս նիստերուն միանալ», աւելցուց Ռիաշի:
Ան յիշեցուց հինգ տարի առաջ լրագրող Մարիօ Ապպուտիի հետ հարցազրոյցի ընթացքին իր այն յայտարարութիւնը, թէ «Ժնևի շրջանին մէջ իսրայէլեան դեսպանատան մը բացումը մի՛ բացառէ»:

Ռիաշի յայտնեց, որ այն, ինչ որ այսօր տեղի կ'ունենայ, «խաղաղութեան ճամբուն» սկիզբն է:

ՄԻՆԻՈՐԱ ԶԵՆՔԻ ՄԵՆԱԸՆՈՐՀԱՆ
ՀԱՐՅԻՆ ՄԵՋ ԻԾԵԱՆՈՒԹԵԱՆ
ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՈՒ ՎՃՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՐՈՇՈՒՄԻ
ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ
ԻՍԱՍՏՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂԵ



Նախկին վարչապետ Ֆուատ Սինիորա «Հատաս-Արապիա» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց. «Յըզպալլան ինքնագլուխ վարուեցաւ առանց լիբանանեան պետութեան գիտութեան եւ համաձայնութեան՝ 2006 թուականին տեղի ունեցած պատերազմին Լիբանանը ներքաշելուն մէջ: Ատկէ ետք Լիբանանը ներքաշեց 2023 թուականի հոկտեմբերի պատերազմին: Անկախ անկէ, ան 2006 թուականէն ետք մերժեց գործադրել Ապահովութեան խորհուրդին հրապարակած թիւ 1701 որոշումը, որ նախարարաց խորհուրդին մէջ միասնակաւութեամբ որդեգրուեցաւ, ներառեալ Յըզպալլայի կողմէ»:

«Յըզպալլայի» այդ որոշումը չարգելէ ետք ան 28 նոյեմբեր 2024-ի համաձայնութիւնը ընդունեց: Պետք է նշել, որ կուսակցութիւնը այդ որոշումը չգործադրեց, ինչպէս Իսրայէլ այդ ատեն, եւ ոչ ալ հիմա գործադրեց», ըսաւ ան:

Շար.ը՝ էջ 8

ԺԱՊԵՐ. «ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԻՆԸ ԱՆՑԱԻ
11 ՄԻԼԻԱՌ ՏՈՒԱՐԸ»

Ելեւմուտքի նախարարութիւնը հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեց, որ Ուաշինկթընի մէջ կը շարունակուին աշխուժ բանակցութիւնները, որոնց ընթացքին ելեւմուտքի նախարար Եասին ժապերի գլխաւորած լիբանանեան պատուիրակութիւնը Միջազգային դրամական ֆոնտի եւ Միջազգային դրամատան աշխանային բանակցութիւններուն երկու կառուցներուն ու միջազգային այլ գործընկերներու կը ներկայացնէ բարեկարգչական ծրագիրներ, որոնք կառավարութիւնն ու խորհրդարանը մշակեցին Լիբանանի տնտեսութեան առողջացման անհրաժեշտ աշակցութեան ապահովման համար:

Ելեւմուտքի նախարարը Միջազգային դրամական ֆոնտին ներկայացուց միջին տեւողութեամբ ելեւմտական ծրագիր մը, ինչ որ բանակցային հոլովոյթին մէջ դրական քայլ է, եւ այժմ աշխատանք կը տարուի անոր զարգացման համար:

Ֆոնտի բարձրաստիճան պաշտօնատարներուն հետ բանակցութիւնները կ'երդրուեցան դրամատուններու վերադարձաւորման վրայ: Ներկայացուցաւ ֆոնտին Լիբանանին տրամադրած թեքնիք օգնութիւնները, որոնք կը ներառեն տուրքերու եւ մաքսատուրքերու բարեկարգումներ, եկամուտի կառավարման առնչուած բարեկարգումներ, ինչպէս նաեւ ելեւմուտքի նախարարութեան մէջ կարողականութիւններու կառուցման մէջ գործակցութիւնը:

Միջազգային դրամատան հետ ժողովներու ընթացքին ներկայացուցան



Լիբանանի համար Միջազգային դրամատան ծրագիրները՝ կ'երդրանաւորվել ելկտրականութեան, կազմի ու ջուրի ծրագիրներու որդեգրումը արագացնելուն վրայ եւ պատրաստելով ընկերային ապահովութեան եւ թուայնացման երկու նոր ծրագիրներ:

Լիբանանեան կառավարութեան ջանքերը Միջազգային դրամատան կողմէ դրական արձագանգի արժանացան: Դրամատունը ողջունեց բարեկարգումներու ձեռնարկումը, եւ իբրեւ այդ աշակցութեան գործնական արտայայտութիւն Միջազգային դրամատունէն 10 գործադիր տնօրէններ խոստովեցին սկիզբը պիտի այցելեն Լիբանան:

Ժապեր 1971 թուականին հիմնուած զարգացող պետութիւններու «24-երու խմբակ»-ի նախարարական ժողովի ընթացքին արտասանեց խօսք մը, որուն մէջ նշեց, թէ Լիբանանի դեմ պատերազմին պատճառով վնասը կը գնահատուի աւելի քան 11 միլիարտ տոլարով, որուն վրայ կ'աւելնան նաեւ մարդկային կորուստներն ու տեղահանութեան ալիքները:

Շար.ը՝ էջ 8

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԴ ԼՈՒՐԵՐ

●ՊԱՇՏՈՆԱԿԱՆ աղբիւրներ «Ժում-հուրիա» օրաթերթին. «Նախագահ Ժոզեֆ Աունի Լիբանանի եւ շրջանին մէջ խաղաղութեան վերաբերեալ վերջին կեցածքները նոյնքան գոհունակութիւն յառաջացուցին, որքան անոնց բովանդակութեան նկատմամբ ամերիկեան եւ եւրոպական հետաքրքրութիւն»:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ բանակը երեքշաբթի գիշեր սուրիական կողմէն ստանձնեց երկու երիտասարդներ, որոնք նոյն օրը Հաուլ Սէյիտ Ալի շրջանէն առեւանգուած էին:

●ԱՐԲԻԻՐՆԵՐ «Տիար» օրաթերթին. «Պապատայի պալատին կեցուածքը ճամբայ կը բանայ նոր Միջին Արեւելքի հաւասարակշռութեան մէջ Լիբանանի դիրքի վերաճշման: Եթէ իշխանութիւնները ներկայ պահը լաւ ձեւով կառավարեն, Լիբանան կրնայ տագնապի բեմէն վերածուի հաւասարակշռութեան բեմի ազգային միասնական հայեցակարգի մը, որ յստակ կարմիր գիծեր կը գծէ»:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ դիւանագիտական բարձրաստիճան աղբիւրներ «Նիտա Ուաթան» օրաթերթին. «Լիբանանեան պետութիւնը վերջերս որոշեց միանալ շրջանին մէջ ընթացք առած փոփոխութիւններու երթին, որովհետեւ նոյնիսկ Համաս շարժումը, որ խնդիրն առնչակից իմասական կողմն է, հրաժարեցաւ զինուորական ընտրանքէն եւ բանակցութեան դիմեց»:

●«ԱՍԱՍ ՄԻՏԻԱ» կը հաղորդէ, որ զինուորա-



կան աղբիւրներ յայտնած են, թէ կը մերժեն «Մեքալիզմ»-ի ժողովները կապել ամերիկացի պատուիրակ Մորկըն Օրթէյ-կըսի անձամբ ներկայութեան՝ նկատի ունենալով շարք մը հարցեր, որոնք այդ զինուորական եւ թեքնիք ժողովէն կը պահանջէ զանոնք լուծել կամ անոնց շուրջ համակարգում կատարել, որովհետեւ կարելորդ «Մեքալիզմ»-ի յանձնարարութիւն մէջ տեղի ունեցողն է եւ ոչ թէ ո՛վ ներկայ է:

●«ՆԻՏԱ ՈՒԲԱՆ» օրաթերթի տեղեկութեան համաձայն, լիբանանեան կողմէն, որ երկիրներուն մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները յանգեցուցած են Պշարթէն մէկ անձի եւ Պիքֆայայէն ուրիշ անձի մը լիբանանեան պատուիրակութեան մաս կազմելուն, որպէսզի Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ առկայ խնդիրներու լուծումը ընկարկեն:

●ԸՍՏ «ՆԻՏԱ ՈՒԲԱՆ» օրաթերթին, «կը թուի, թէ Լիբանանին կատարածին եւ Միջազգային դրամական ֆոնտին պահանջածին միջեւ բացը մեծ է: Տուեալները ցոյց կու տան, թէ Միջազգային դրամական ֆոնտին կարգ մը դիտողութիւններուն ու Լիբանանէն պահանջներուն գործադրութիւնը կը թուի դժուար կիրարկելի ըլլալ»:

«ԱՆԿԱՆՆԵՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ» ...

Շարունակուած Ա. Էջէն

Պատուիրակութիւնը շնորհաւորեց նոր ընտրուած Կերոնական կոմիտէն եւ ներկայացուցիչը: Մատենան իր խօսքը սկսաւ Հայկական հարցէն՝ շեշտելով հայերու եւ ՀՀ Դաշնակցութեան դերակատարութիւնը իբրեւ կամուրջ՝ լիբանանցիներուն միջեւ:

Զննարկուեցան ընդհանուր կացութիւնը եւ ընթացիկ անցուդարձերը՝ սկսելով շրջանային գլխաւոր իրադարձութենէն՝ Շարմ Շէյխի վեհաժողովէն եւ Կազայի վերաբերեալ համաձայնութենէն, մինչեւ անոնց ազդեցութիւնը տարածաշրջանին վրայ ընդհանրապէս եւ Լիբանանի վրայ՝ մասնաւորապէս: Այս ծիրին մէջ ներկայացուցաւ զրաւուած եւ աւերուած տա-

րածներու ու անոնց բնակիչներու վիճակը, ինչպէս նաեւ հանրապետութեան նախագահին, կառավարութեան եւ բանակի հրամանատարութեան ջանքերը այս ուղղութեամբ:

Կայացաւ նաեւ տեսակետներու փոխանակում քաղաքական եւ օրէնսդրական հարցերու շուրջ՝ սկսած ընտրական օրէնքէն մինչեւ դրամատուններու մէջ պահ դրուած գումարներ ունեցողներուն իրաւունքները: Երկու կողմերն ալ համաձայնեցան շարունակել երկխօսութիւնը՝ ազգային հիմնահարցերու շուրջ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԳՐԱԴԻՈՒԱԾ ՕՐ
5 ՅՈՒՆԻՈՒԱՐ 2026

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԱՄԱՐ ԻՓԷԿԵԱՆ» ԹԱՏԵՐԱՆՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅՑՆԵ
«Մարդը Աթլանթիսէն»
ՔՆՆԱՐԿՈՒՄ
ՈՐԲԱՐ, 17 ԻՆՎԵՆԻՐ 2025-ԻՆ, ԺԱՄԸ 8:00-ԻՆ
Համագայինի «Միմոն Վրացեան» մասնաճիւղի կեդրոն
ՀՐԱԲԵՐ

Առցանց Լսարան
ԱԶԴԱԿ
Հինգշաբթի, 16 Հոկտեմբեր 2025-ին, Պէյրութի Ժամանակացոյցով Ժամը 19:00-ին:
Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակի կամ +374 55 70 80 50 համարին (WhatsApp)
Հայ-ճափոնական միջպետական յարաբերութիւնները եւ հայագիտութիւնը ճափոնի մէջ
Դասախօս՝ Դոկտ. Թաթայոքի Եռչիմուրա
Թոքիոյ համալսարանի մէջ արեւելահայերէնի դասախօս

ՍՈՒՐԻԱ

ԱՒԱՆԳԱՊԱՀ ՔԵՍԱՊՅԻՆ
ԻՐԱՅԱՏՈՒԿ ՈՃՈՎ ԿԸ ՏՕՆԷ
ԱՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԿԵՆՍԱՒՈՐՄԱՆ ՏԱՐԻՆ



Հովանավորությամբ Համազգայինի Շրջանային վարչության, կազմակերպությամբ Զեսապի Համազգայինի «Համո Օհանջանեան» մասնաճիւղին, 27 սեպտեմբերին «Զեսապ» համալիրի շրջափակին մէջ տեղի ունեցաւ տոհմիկ երեկոյ՝ նուիրուած 2025-ին Արամ Ա. վեհափառ հայրապետին կողմէ հռչակուած «Աւանդութեան վերակենսաւորման տարուան»:

Բացման խօսքով հանդէս եկաւ վարչութեան անդամ Սեդա Արսլանեան, որ անդրադարձաւ հայկական մշակոյթին եւ գաւառական աւանդութիւններու պահպանման արժեքին ու կարեւորութեան՝ շեշտելով, որ Համազգայինը՝ որպէս մշակութային միութիւն, մեծ դերակատարութիւն ունի այս արժեքները պահպանելու գործընթացին մէջ:

Արաբերէնով արտասանած խօսքին մէջ ան շնորհակալութիւն յայտնեց գիւղի ոստիկանապետին, որ իր ներկայութեամբ քաջալերեց գիւղի աւանդութիւնները ներկայացնող երեկոն:

Երեկոն ընթացաւ մտերմիկ մթնոլորտի մը մէջ՝ երգ ու պարով, Զեսապի աւանդական խաղողով ռուպի պատրաստութեամբ, որ քեսապցիք՝ կը կոչեն «Մասարա», ինչպէս նաեւ՝ Զեսապի աւանդական ուտեստերէնի հիւրասիրութեամբ:

Շնորհակալական եւ երախտագիտութեան սրտի խօսք արտասանեցին գիւղապետը եւ վարչութեան ատենապետ Մանասէ Մանճիկեան:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ
ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻ
ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ



Նախաձեռնութեամբ Սուրիոյ Հայ աւետարանական համայնքի պետ վեր. դոկտ. Յարութիւն Սելիմեանի, «Kerk in Actie»-ի ներդրումով եւ կազմակերպութեամբ Սիջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին, 5 հոկտեմբերին Հայկա Քոլեճ աղջկանց բաժինին մէջ տեղի ունեցաւ նորաստեղծ «Երիտասարդաց վերականգնումի կեդրոն»-ի բացումը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Լուսին Ապաճեան-Չիլաբոշեան, որ ողջունելէ ետք ներկաները, յիշեց հաւաքին նպատակը:

Այնուհետեւ օրուան խորհուրդը ներկայացուց վեր. դոկտ. Յարութիւն Սելիմեան, որ յայտնեց, թէ կեդրոնը կը գործէ նպատակ ունենալով տրամադրելու անվտանգ եւ աջակցող միջավայր, ուր երիտասարդները պիտի կարենան՝ զարգացնել սոր հմտութիւններ, ստանալ հոգեբանական եւ մասնագիտական աջակցութիւն եւ քայլ առ քայլ կառուցել իրենց կեանքի նոր ուղին: Ան դիտել տուաւ, որ սոյն նախաձեռնութիւնը կը ներկայացնէ կարեւոր եւ գործնական քայլ մը՝ աջակցելու երիտասարդներուն իրենց մարտահրաւերներուն մէջ եւ նպաստելու անոնց ներուժի բացայայտումին:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՔՆԵՐ

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԴՐԱՄԱՅԱՒԱՐ



Կազմակերպութեամբ ՀՅԴ Բիւրոյի Արեւմտեան Միացեալ Նահանգներու դրամահաւաքի յանձնախումբին 27 սեպտեմբերին աւելի քան հարիւր բարեփառներ եւ աշակիցներ հաւաքուեցան Կլետսթըյի մէջ գտնուող Կայծակ եւ Ծովիկ Չեյթլեան ամուլին

տան մէջ ընթրիքի շուրջ՝ աշակցելու Հայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրոյի գործունեութեան: Երեկոն վարեց երկարամեայ քաղաքական-հասարակական գործիչ Յովիկ Սալիպա:

Խօսքերով հանդէս եկան Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ Կարո Մատելեան եւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Տարոն Տէր Խաչատուրեան:

Իր խօսքին մէջ Տէր Խաչատուրեան նշեց դիմադրութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ յանձնառութեան, փորձառու դատողութեան եւ առաջնորդութեան գերակշռող անհրաժեշտութիւնը:

նը՝ յուսահատութեան եւ դժուարութիւններու առջեւ, մինչ Հայաստան եւ հայ ժողովուրդը շատ վտանգաւոր իրավիճակներու մէջ են:

ՀՅԴ Բիւրոյի անդամ եւ ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր Լիլիթ Գալստեան «Չում»-ի միջոցով միանալով՝ ընդգծեց սփիւռքի շարունակական ներգրաւածութեան կարեւորութիւնը Հայաստանի եւ Արցախի ամրապնդման գործին մէջ:

Թեմի առաջնորդ Գեղամ արք. Խաչերեան օրինեց սեղանները եւ ընդգծեց երեկոյի նպատակի հոգեւոր եւ ազգային կողմերը:

Շար.ը՝ էջ 6

ՀՄԸՄ-Ի ՊՐՊԵՆԵԻ «ՍԻՓԱՆ»
ՄԱՍՆԱԾԻՂԻ 30-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

28 սեպտեմբերին Պրոպենքի Հայ երիտասարդական կեդրոնին մէջ նշուեցաւ ՀՄԸՄ-ի Պրպենքի «Սիփան» մասնաճիւղի հիմնադրութեան 30-ամեակը:

Ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Սարո Ղազարեան իր արտասանած քաջման խօսքին մէջ անդրադարձաւ «Սիփան»-ի ձեռքբերումներուն՝ ընդգծելով, որ տօնական հաւաքը նաեւ առիթ է գնահատելու եւ պատուելու նուիրելիները, որոնք հնարաւոր դարձուցած են տեսլականի իրականացումը:

Օրուան հանդիսավար ՀՄԸՄ-ի երկարամեայ նուիրելի անդամ Արիկ Գեորգեան հաստատեց, որ ամիսը կամքը, անկոտրում եռանդը, սպասքը՝ դէպի նպատակ, կամաւորական ուժը, ժառանգած կորովը այն երաշխիքներն են, որոնք հնարաւոր դարձուցին «Սիփան» մասնաճիւղին յաջողութիւնը:

Կոմիտաս Ա. քնիւ. Թորոսեան մեծապէս կարեւոր նկատելով կազմակերպութեան առաքելութիւնը՝ հաստատեց, որ քանի դեռ կան ՀՄԸՄ-ի «Սիփան» մասնաճիւղի նման կեդրոններ, նոր սերունդները ձուլումէ կարելի է պաշտպանուած զգալ:

Մասնաճիւղի վարչութեան ատենա-



պետ Ռոպերթ Մեհրապի ամփոփ կէտերու մէջ ներկայացուց «Սիփան»-ի գործունեութիւնը՝ իր երախտագիտութիւնը յայտնելով մասնաճիւղի յաջողութեան գործին նպաստած բոլոր մասնակիցներուն, ընդգծելով, որ վերջը հնարաւոր դարձած է միացեալ ուժերով: Ան ըսաւ, որ «Սիփան»-ը բազմաթիւ հնարաւորութիւններ ստեղծած է հայ երիտասարդներուն համար՝ ներգրաւելով գիրենք մարզական, սկստուական եւ մշակութային ոլորտներուն մէջ:

Քալիֆորնիոյ ներկայացուցիչներու տան անդամ Նիկ Շուլ յայտարարեց, որ իրեն համար պատիւ է ներկայ գտնուիլ իր ընտրաշրջանին մէջ ներդրումներ ունեցած կազմակերպութեան 30-ամեակի տօնակատարութեան եւ յուշագրով ու գումարով իր երախտագիտութիւնը յայտնեց:

Շար.ը՝ էջ 6

ՅՈՒՆԱՍՏԱՆ

«ՉԱՐԹՕՆԵ»-Ը ԴԱՐՁԵԱԼ
ԲԵՄԻՆ ՎՐԱՅ



Կազմակերպութեամբ Համազգայինի թատերական միաւորին, 24 սեպտեմբերին Այա Սոֆիայի «Սելեփիցարի» պուրակի «Ալեքոս Խրիսոսթոմիտիս» բացօթեայ թատրոնի բեմին վրայ Համազգայինի «Արշալիր Գազանճեան» բազմանդամ թատերախումբը տեղական փառատօնի ծիրէն ներս ներկայացուց Մալխասի Նշանաւոր վէպը՝ «Չարթօն»-ը, բեմադրութեամբ Յակոբ Պարսամեանի: Յայտնենք, որ սոյն թատերականացուած աշխատանքին երկրորդ յաջող ներկայացումն էր:

Մալխասի համանուն վէպին վրայ հիմնուած յուսելով ներկայացումը, որ կը ցուցնէ ֆետայական շարժումը, թատերականացուած Կարապետ Գալֆայեանի եւ թարգմանուած Սարգիս Աղապատեանի կողմէ, կը ծառայէր յատուկ նպատակի. Հայ դատի ներկայացումը եւ մեր մշակոյթի ծանօթացումը՝ յուսական հասարակութեան:

Արդէն, առաջին ելոյթէն ետք, 13 ապրիլին, յոյն թատերասերներ խոստովանեցան, որ թատերախաղին շնորհիւ իմացան Հայոց պատմութեան մասին: Թատերական կտորին մէջ կարելի է նկատել նաեւ հին յունական թատրոնի երեւոյթներ՝ նախապատրաստում եւ ճանաչում:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Հ. Կ. ԽԱԶԻ 85-ՐԴ
ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՆՈՐ
ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ԱԶԴԱՆՇԱՆԸ
ՏՈՒՄ ԿՆՈՋԱԿԱՆ
ՄԵԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ



5 հոկտեմբերին Զոքիսիոյ «Չաւարեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Յունաստանի Հ. Կ. Խաչի 85-րդ Պատգամաւորական ժողովը:

Թեմի առաջնորդ Սահակ եպս. Եմիշեան իր խօսքին մէջ դրուատեց միութեան աշխատանքը՝ նախ նշելով ՀՕՄ-ի դերակատարութիւնը հայ կեանքէն ներս, ապա իր խօսքը մասնաւորեց Հ. Կ. Խաչի բեղուն գործին վրայ՝ բարեսիրական, կրթական, ինսամատարական եւ ազգային ուղղութիւններով:

ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Հռիփսիմէ Յարութիւնեան յայտնեց, որ ՀՕՄ-ը իր 115-ամեայ պատմութեամբ եւ ՀՅԴ-ին իր 135-ամեայ գործունեութեամբ, միասնական երթի փայլուն ընթացքին փաստը կը ներկայացնեն հայ ժողովուրդին առջեւ՝ շեշտը դնելով հայրենի եւ սփիւռքեան մարտահրաւերներուն, Արցախի կորուստէն ետք դարձեալ համախմբուելու հրամայական անհրաժեշտութեան վրայ, թօթափելով հոգեկան ընկճուածութեան եւ երբեմն անտարբերութեան կլանիչ վտանգը, տալով նոր շունչ եւ ոգի հայակերտումի կարեւորագոյն նպատակին:

Նիստի սկիզբը կարգացուեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչին նամակը, որուն միջոցով անհուն գնահատանք կը յայտնուէր Յունաստանի միաւորի գործունեութեան մասին՝ նշելով անոր հայրենասնուէր ծառայութիւնը ժողովուրդին եւ հայրենիքին:

Պատգամաւորական ժողովը հանգամանօրէն ընկութեան ենթարկեց Շրջանային վարչութեան եւ

Շար.ը՝ էջ 6

ԹԱՒԶՈՒԹԱԿԱՅԱՐՈՒՄԻ ԱՍՏՂԻԿ ՍԻՐԱՆՈՍԵԱՆԻՆ
ՇՆՈՐՀՈՒԵՑԱՒ «ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԵԱՅ» ՊԱՏՈՒՅ
ՇԵԱՆՇԱՆԻ ԱՍՊԵՏԻ ԿՈՉՈՒՄԸ

25 սեպտեմբերին Փարիզի Երաժշտական բարձրագոյն վարժարանին մէջ տեղի ունեցած հանդիսաւոր արարողութեան մը ընթացքին Ֆրանսապի թաւաքութեան Սատիկ Սիրանոսեան ստացաւ «Ազգային արժանեաց» պատուոյ շքանշանի ասպետի կոչում, որ Ֆրանսայի ամենաբարձր պարգեւներէն է: Ան արժանի նկատուեցաւ իր արուեստի նուաճումներուն եւ քաղաքացիական նուիրումին համար:

Շքանշանը 36-ամեայ հայ երաժիշտին յանձնուեցաւ դրամատիքի մեկենաս Ֆրանսուա Հենրիյի կողմէ՝ ներկայութեամբ մեծաբնակի ընտանիքին, երաժիշտ բարեկամներու, արուեստագետներու, գրողներու, լրագրողներու եւ ընդհանրապէս գործարար աշ-



խարհի ծանօթ դէմքերէ բաղկացած այլ հիւրերու ներկայութեան:

Ֆրանսուա Հենրի իր խօսքին մէջ յայտարարեց, որ այս քայլով Ֆրանսայի Հանրապետութիւնը իր յարգանքի տուրքը կը մատուցէ ոչ միայն բացառիկ երաժիշտի մը, այլեւ՝ նուիրելու կնոջ մը, որ երաժիշտութիւնը դարձուցած է բաժնետէկութեան եւ մշակութային ժառանգութեան համապարփակ լեզու: Հետեւեալ Ֆրանսայի Հանրապետութիւնը կը պատուէ ոչ միայն գեղարուեստական բացառիկ գործունեութիւն մը, այլեւ՝ խոր քաղաքացիական նուիրում մը: Յայտնենք, որ հեղինակաւոր միջազգային մրցոյթներու դափնեկիր Աստիկ Սիրանոսեան ելոյթ

Շար.ը՝ էջ 6

ՓԱԹՐԻՍ ԾՈԼՈՒԵԱՆԻ «ՎԵՐԱՊՐԻԼ
ԵՒ ՎԵՐԱԾՆԻԼ» ՀԱՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

3 հոկտեմբերին Փարիզի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ մայր եկեղեցւոյ «Նուրիան Ֆրէնկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ լսարան, որուն ընթացքին Թեմական խորհուրդի եւ Փարիզի եկեղեցւոյ Ծխական խորհուրդի նախկին նախագահ Փաթրիս Ծոլուեան ներկայացուց իր «Վերապրիլ եւ վերածնիլ» հայ ընտանիքի մը անցած ճանապարհը Օսմանեան կայսրութեան մէջ իր ծննդավայրէն մինչեւ սփիւռք» հատորը:

Թեմի առաջնորդ Գրիգոր եպս. Խաչատուրեանի աղօթքէն ետք Ծխական խորհուրդի ատենապետ Րաֆֆ Մոմճեան ներկայացուց գիրքը եւ անոր հեղինակը:

Շար.ը՝ էջ 6



ՊԱՏՐԱՍԵՑ՝ ՄԱՐԱԼ ՄԵՆԵԱՆ

ԱՆՅԵՏ ԿՈՐԱԾ ԻՐԵՐ

ՏԻԿԸ

Տիկը մեծ պարկ է, որ անցեալին կ'օգտագործուէր գինիի կամ որեւէ այլ հեղուկի պահպանման կամ խմորման համար: Չայն կը պատրաստէին այծի կամ ոչխարի կաշէին:

Գիւղացիները կը վերցնէին ամբողջական այծի կամ ոչխարի մորթը (առանց կըտրատելու), կը մշակէին աղով, կը ճարպագերծէին ու կը չորցնէին: Մուտքը՝ պարանոցին մասը, բաց կը ձգէին հեղուկ լեցնելու համար: Մնացեալ բացումները՝ ոտքերու հատուածները կը կարէին կամ կը կապէին:

Գիւղերուն մէջ եւ քոչուոր համայնքներուն համար տիկը համարուած էր չափազանց կարեւոր, պիտակի եւ գործնական միջոց՝ ջուր բերելու, գինի տեղափոխելու եւ օդիի պահպանման համար: Անասուններուն մորթին ճկունութեան պատճառով այդ տիկերը կարելի կ'ըլլար տեղափոխել ձիով, էշով, նոյնիսկ՝ ձեռքերով:

Նշենք, որ տիկի նմուշներ ներկայիս ցուցադրուած են Կոտայքի Երկրագիտական թանգարանին եւ Wine History Museum of Armenia-ի ցուցասրահին մէջ:



ՄԵՐ ԱՌՕՐԵԱՆ

ԴԻՐԱՅՆՈՂ՝ ԾԵՐՄԱԿ ԶԱՅԱԽԸ



Քիմիական թունաւոր նիւթերէ գերծ ճերմակ քացախը հրաշք միջոց է տան մաքրութեան համար: Անկիւա նոյնքան ազդու է, որքան՝ շուկան վաճառուող մաքրութեան դեղերը:

- Ծերմակ քացախը կիրը լուծելու, քակելու յատկութիւն ունի, զայն կարելի է օգտագործել արդուկներուն կիր կապած ծակտիկները մաքրելու եւ տան ծորակները փայլեցնելու համար:
- Ծերմակ քացախը գէշ հոտերը չեզոքացնելու յատկութիւն ունի. զայն կարելի է օգտագործել մանրալիքը, սառնարանը, լուացքի մէքենան կամ աղբին դոյլը հոտազերծելու համար:
- Ծերմակ քացախը նաեւ մանրէասպան է. զայն կարելի է օգտագործել խոհանոցին աշխատանքի քարը (եթէ մարմարեայ չէ), լուացարանը, մանրելու տախտակը հակաանեխելու համար:
- Ծերմակ քացախը հիւսնալի միջոց է կանաչեղէնները, պտուղներն ու բանջարեղէնները լուալու եւ հակաանեխելու համար:
- Ծերմակ քացախով կարելի է մաքրել սալայատակը, տան ապակիներն ու հայելիները:
- Ծերմակ քացախը նաեւ իւղազերծող է, հետեւաբար գործնական միջոց մը՝ կաթասներն ու տապակները մաքրելու համար:
- Ծերմակ քացախը փայլք եւ փափկութիւն կու տայ մազերուն եւ ազդու միջոց է ոջիկները հեռացնելու:
- Ծերմակ քացախով կարելի է հակաանեխել մօեղի, մրջինի եւ այլ միշտներու խայթուածքները:

ՉԳՈՒՆԱՅՈՒՄ

- Ա.- Ծերմակ քացախ օգտագործելու պարագային զայն միշտ լուծել ջուրով:
- Բ.- Երբեք ճերմակ քացախին «Օ տը ժաւել» չխառնել, այլապէս անդառնալի վնասներ կրնայ պատճառել շնչառական գործարաններուն:
- Գ.- Ծերմակ քացախը նաեւ կը վնասէ՝ մարմարիին, կրակիթին, փայտին եւ այլն:
- Դ.- Բնական քարերը նոյնպէս կրնան ազդուիլ ճերմակ քացախէն. հետեւաբար քարով զարդեղէնները երբեք չմաքրել քացախի խառնուրդով:
- Ե.- Ելեկտրոնային սարքերու (ըջիջային, հեռատեսիլ, լէպթոպ...) մակերեսները նոյնպէս կրնան վնասուիլ ճերմակ քացախէն:
- Չ.- Վերջապէս, նուրբ գործուածքները, մետաքսը, սաթները հեռու պահել ճերմակ քացախէն:

ՄԵՆՔ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՌԻՏԵԼՈՒ ԱՅՆ, ԻՆՉԻ ՊԱԿԱՍԸ ԿԱՅ ՄԵՐ ՄԱՐՄՆԻՆ ՄԷՋ

Պարզուէր է, որ մեր սննդային նախափորութիւնները կապուած են սննդաբար նիւթերու պակասի, հորմոնային եւ նիւթափոփոխականութեան խայտումներու եւ հոգեբանական խնդիրներու հետ:

ՏՈՒՄ

Օրուան ընթացքին յանկարծ տուրմ ուտելու մեծ պահաճը կը զգաք, կը դառնաք ցրուած ու միայն այդ մասի՞ն կը մտածեք... Ասիկա կըրնայ պայմանաւորուած ըլլալ մակնեղիմի պակասով: Զարցը ուտելու անյազ ցանկութիւն կըրնայ առաջանալ նաեւ մարմնին մէջ քրոմի, ֆոսֆորի, ինչպէս նաեւ կլիբզդի պակասի պարագային:

Կերէ՞ք ընկոյզ, հացահատիկ, դդումի սերմեր, պրոքուի, պտուղ եւ չափաւոր քանակութեամբ տուրմ:

ԿՑՈՒ

Եթէ օրուան ընթացքին յաճախ որեւէ կծու բան ուտելու փափաք կ'ունենաք, կը նշանակէ՝ ձեր մարմինը կծու ուտելիքի կարիք ունի քըրտնարտադրութիւնը դրդելու եւ զովանալու համար: Յնարաւոր է՝ պատճառը գինկի, ծծումքի պակասն է, կամ՝ վահանագեղձի հետ կապուած խնդիրները:

Կերէ՞ք ոչ խղոտ միս, ծովամթերք, սիստոր եւ կանաչ բանջարեղէն:

ՄԻՍ

Եթէ յաճախ կ'երագէք **սթեյք** ուտելու մասին, ամենայն հաւանականութեամբ դուք ՊԷ. կենսանիւթի, մակնեղիմի, ֆոլաթթուի կամ երկաթի պակաս ունիք:

Կերէք հաւկիթ, միս, բնականաբար՝ բանջարեղէնի համադրութեամբ:

ՃԱՐԴ

Իւրոտ ուտելիքի հանդէպ յանկարծակի սերը կրնայ կիրի կամ հիմնական ճարպաթթուներու պակասի ահագանգ ըլլալ: Ասիկա կրնայ պատահիլ նաեւ սննդականոսի կամ վատ տրամադրութեան պարագային:

Իւրոտ ուտելիքի պահանջը կրնան զայել ստեպիլը, աւոքատոն, ընկոյզը... Կանաչ բանջարեղէնները կը նպաստեն կիրի պաշարներու համալրման, իսկ տրամադրութիւնը կարելի է բարելաւել մարզանքի ճամբով:

ԱՐ

Եթէ անդադար **փոփքորն**, **չիփս** եւ աղի պիտակեղէն կ'ուտեք, հնարաւոր է՝ ձեր մարմինը նատրիումի (սոտիումի) պակաս կը զգայ: Ասոր կրնան նպաստել ընկճախտն ու ջրազրկումը: Աղի որեւէ բան ուտելու ցանկութիւնը կրնայ գինկի պակասի կամ երիկամներու խնդիրի մասին ահագանգել:

Կերէ՞ք վարունգ, նեխուր, ծուկ եւ օրական 8-10 բաժակ ջուր խմեցեք:



2026-Ի ՁՄԵՌՆԱՅԻՆ ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ



Փարիզէն մինչեւ Միլանօ եւ Նիւ Եորք աշխարհի մեծագոյն ռճաբաններն ու նորաձեւութեան տունները արդէն իսկ ամիսներ առաջ վճռեցին 2025-2026 աշուն-ձմեռ նորաձեւութեան զըլխաւոր միտումները, որոնք կը համատեղեն անցեալի կարօտախտն ու ապագայի համարձակութիւնը: Ահա թէ ի՞նչ կ'առաջարկեն աշխարհի մեծագոյն ռճաբանները,

- Շքեղ վերափոխումներ եղանակի աստղերն են:

«shearling» բաճկոնները, ծաւալուն օձիքները, ազատ կտրուածքները եւ արհեստական մուշտակը կնոջ պիտի հաղորդեն վայելչութիւն, բայց նաեւ պիտի տան շարժումի ազատութիւն եւ յարմարաւետ նրբագեղութիւն:

- Ժապաւէն հանգոյցներ եւ մարգարտեայ **աքսետուարներ** կ'առաջարկէ Ըանել Նորաձեւութեան տունը:

- Բարձր օձիքներ, երկար եւ վարեն լայն կիսաշրջագծեստներ ու ծաւալուն զարդասեղներ կ'առաջարկեն Զարուի-նա Յերերան եւ Սփորթմաքը:

- Ծալքերով եւ բազմաշերտ կտոր-ւածքով հագուստներ, կիսաշրջագծեստներ ու տաքատներ կ'առաջարկեն Տոյլէ Էնտ Կապանա եւ Փրատա:

- Կոնքին շուրջ փաթթուող **էշարփներ** կ'առաջարկեն Միու Միուն եւ Զլուէն:

- Ինչ կը վերաբերի յառաջիկայ ձմեռան նորաձեւ գոյներուն, մոխրագոյնը, պիտակի կանաչը, գինեգոյնի բոլոր երանգները, մեղեակիի մանիշակագոյնը, փայլուն մետաղական գոյները նորաձեւ են ու պիտի կտրեն ձմեռան միապաղաղութիւնը:

- **Աքսետուարներու** կապակցութեամբ, նորաձեւ են մէջքը կամ կոնքը զարդարող տարբեր չափի գօտիները, որոնք կարելի է նաեւ զոյգ կրել: «Doctor Bag» մեծ պայուսակները կըրկին նորաձեւ են, իսկ սրածայր քիթով նրբագեղ, բարձրակրունկ կօշիկները, ինչպէս նաեւ **պալլորին** կօշիկները կը մնան միշտ նորաձեւ: Վերադարձած են նաեւ երկարավիզ եւ ծունկէն վեր բարձրացող մոյկերը, որոնք կարելի է կրել **շորթերու, լէկինկներու** կամ կարճ կիսաշրջագծեստներու հետ:

Փողկապներ, լայնեզր գլխարկներ, մեծ չափի զարդասեղներ, տանթել կամ խայտաբղետ **քլաւներ** պիտի մթողջացնեն վայելուչ կնոջ կերպարը:

- Վերջապէս կտորներու գծով՝ թաւիշը, արհեստական մուշտակը, բուրդը, կաշին, **տանթելը, սաթէն** ու մետաքսը օգտագործուած են ցերեկային թէ գիշերային հագուստներուն որակ եւ հմայք տալու համար:

ՇԱԲԹՈՒԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ


Յէյ ջա՛ն Երեւան, Ձմեռների դէմ միշտ դալա՛ր մնաս Ու պայքարներում մնաս յաղթական, Բռնուցըդ չարին լինի պատուհաս, Եւ զաւակներիդ համար հեռաւոր Դու լայնաբաց գիրկ դառնաս մայրական Եւ հեռուներից երգես մեզ օրօր՝ Յէյ ջա՛ն Երեւան... Յէյ ջա՛ն Երեւան, Օրերդ անցնին ծափով ու երգով, Օրօրոցներիդ վերեւ ապագան Լինի զարնանային մեղմ ու անուշ հով. Զրոյնքդ հողիդ օրհնութիւն դառնայ, Յողդ ոսոխիդ դառնայ գերեզման, Ու վիշտը սրտդ ընդմիշտ բացակայ՝ Յէյ ջա՛ն Երեւան... Յէյ ջա՛ն Երեւան, Դրօշդ ձեռքիդ միշտ ամուր բռնես, Մեծ երազը մեր անվթար պահես, Ալիքն անցեալին զօրող կապ լինես, Լոյսի ակերից անյազուրդ ըմպես, Նայուածքիդ հուրով չարքերը վանես Եւ հողմերի դէմ անխորտակ կանգնես՝ Յէյ ջա՛ն Երեւան:

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Երեւանը դարձաւ 2807 տարեկան:

ԽՈՅԱԳԻՐ

ԿՈՒԱՔԱՄՈՒԷ՝ ՄԵՔՍԻՔԱԿԱՆ ԹԱԹԽԱՆ



Բաղադրիչներ

- 2 միջակ, հասած աւոքատօ
- 1 ապուրի դգալ կիտրոնի հիւթ
- 1 պզտիկ լոլիկ՝ միջուկը հանուած եւ մանրուած
- 1/4 զաւաթ մանրուած կարմիր սոխ
- 2 ապուրի դգալ մանրուած գինձ
- 1 ապուրի դգալ մանրուած «jalapeno» (կծու կանաչ պղպեղ)
- 1 աճեղ ճգմուած սիստոր
- 1/2 թէյի դգալ աղ

Պատրաստութիւն

Խորունկ ամանի մը մէջ պատառաքաղով ճգմել հասուն աւոքատները՝ առանց խիւսի վերածելու: Յաջորդաբար աւելցնել՝ կիտրոնի հիւթը, մանրուած սոխն ու լոլիկը, ճգմուած սիստորը, գինձն ու jalapeno-ն:

Խառնուրդը փոխադրել ներկայանալի ամանի մը մէջ եւ զարդարել թորթիյա չիփսերով:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱՒԻՍԱԳԱԼԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔԻ 95-ՐԴ...

Շարունակուած 3-րդ էջէն

հայրերուն ճամբով: Այսօր դպրեվանքը նոյն ոգիով պիտի կատարէ ու ստանձնած է այդ առաքելութիւնը, որպէսզի պայծառակերպուած երթայ մեր ժողովուրդին՝ այս օրերուն մանաւանդ, երբ աշխարհի խաւարին դիմաց մենք կարիքը ունիք աստուածային լոյսին: Ահա-ասիկ՝ դպրեվանքին առաքելութիւնը», ընդգծեց հայրապետը:

Ապա վեհափառ հայրապետը, որ խօսքը ուղղելով դպրեվանքիներուն՝ յորդորեց, իր այս ոգիով դպրեվանքին մէջ պէտք է կերտուիլ: Դպրեվանքը միայն դաս սորվելու վայր չէ, այլ սրբավայր մըն է, ուր հոգեմտաւոր կազմաւորում ու կերտում տեղի կ'ունենայ: Դպրեվանքից առաքելութիւն ունեցող մարդիկ են, որոնք կոչուած են դառնալու նոր օրերու թարգմանիչներ ու Աստուծոյ լոյսը տարածող վկաներ՝ մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքները կենսագործողներ:

Իր պատգամի աւարտին, Արամ Ա. կաթողիկոս ողջունեց դպրեվանքի տեսչութիւնը, ուսուցչական կազմը եւ անոր նիւթաբարոյական նեցուկ կանգնող բոլոր ազգայինները՝ դիտել տալով ու ընդգծելով, որ հոգեւորական ըլլալը չէ, որ միայն կոչուծ կը պահանջէ, այլ նոյնքան եւ աւելի՝ ուսուցիչ ըլլալը, որովհետեւ մեր ուսուցիչներուն, հոգեւորական թէ աշխարհական, շնորհիւ է, որ դպրեվանքը կ'իրագործէ մարդու մատակարարելու սրբագան առաքելութիւնը:

Ձեռնարկի աւարտին հայրապետը «Պահպանիչ» աղօթքով օրհնեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, դպրեվանքը եւ ներկաները:

2026-Ի ՄՈՆԻՏԻՆԳԻ ԶՏՈՒՄ

- ԱՆԳԼԻԱ ԱՊԱՅՈՎԵՑ ԻՐ ՏՈՄՍԸ - ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ ԻՐԼԱՆՏԱՅԻ ՄԷՋ

2026-ի Մոնտիալի գտումի 4-րդ հանգրուանի մրցումներուն, Հայաստանի ազգային խումբը Տապլինի մէջ դժուար մրցում մը ունեցաւ Իրլանտայի դէմ՝ եւ 1-0 արդիւնքով պարտութիւն կրեց:

Առաջին կիսախաղին բաւական սուր պայքար մղուեցաւ, ուր Իրլանտա կը փորձէր անպայման յաղթել, մանաւանդ որ ան իր նախկին երեց մրցումներուն միայն 1 կէտ չափած էր, մինչ Հայաստան կը պայքարէր 3 կէտերու համար՝ զանոնք աւելցնելու համար իր 3 կէտերուն, պայքարելու համար 2-րդ դիրքին համար:

Առիթներ ստեղծեցին մէկ կողմէ Սփերձեան, իսկ միւս կողմէ Իրլանտայի յառաջապահները, ուր Հայաստանի բերդապահ Յենրի Աւագեան բարձր մակարդակի խաղարկութիւն ցուցաբերեց:

Բ. կիսախաղին 7-րդ վայրկեանին խմբապետ Տիգրան Բարսեղեան չկրցաւ ինքզինք զսպել եւ գլխու հարուածով մը գետին փռեց Սաութհեմփթընի մարզիկ Ֆին Ազագը եւ... վտարուեցաւ դաշտէն ուղիղ կարմիր քարտով:

Անշուշտ հաւասարակշռուած մրցում մը անհաւասար կը դառնայ, երբ 10-ի դէմ 11 մարզիկներ կը մրցին եւ Իրլանտա բնականաբար աւելի լուրջ յարձակումներով սկսաւ խաղալ եւ 70-րդ վայրկեանին կոլ մըն ալ նշանակեց՝ շնորհիւ Ռոմայի յառաջապահ Էվըն Ֆերկուընի ջոնընը մը ետք:

Այժմ պայքարը սրած է Բ. դիրքին համար, ուր վերջին երկու



մրցումներուն Հունգարիա, Իրլանտա եւ Հայաստան իրենց կարելիս պիտի ընեն հասնելու Մոնտիալի փլեյ-օֆին:

«Այո», կարմիր քարտը մեր խաղին ամբողջ ռազմավարութիւնը քանդեց, բայց առիկա իմ մարզիկինս սխալն է, ինչ որ կը նշանակէ, թէ իմ սխալն է: Իմ մարզիկներուս հետ կապուած ինչ որ պատահի, իբրեւ գլխաւոր մարզիչ իմ պատասխանատուութիւնս է, եւ ես Ներողութիւն կը խնդրեմ: Մեր համակիրները մեզմէ կէտեր կ'ակնկալէին, իսկ մենք այս երկու մրցումներուն զանազան պատճառներով ձախողեցանք:

Ներողութիւն կը խնդրեմ, բայց ամէն պարագայի հպարտ եմ իմ խումբովս:

Մրցումէն ետք Բարսեղեանի հետ չխօսեցայ (առանձին), խօսեցայ ամբողջ խումբին հետ, շնորհակալութիւն յայտնեցի նուիրուածութեան, պայքարի եւ միասնութեան համար: Ժըխտական հարցերու շուրջ ժամանակ ունիք վերլուծելու եւ խօսելու: Այս պահուն պէտք է միասին ըլլալ, ընդունիլ պարտութիւնը եւ շնորհաւորել մրցակիցը:

Շատ լաւ պատրաստուած էինք, մրցումէն առաջ լաւ գիտէինք, որ մրցակից մարզիչը խաղաոճը պիտի փոխէ: Մենք կրցանք ետ մղել եւ գտնել հակադարձելու ձեւը: Վստահ եմ, որ կարողութիւն ունէինք պայքարելու եւ յաջողութեան հասնելու 11-ը 11-ի դէմ, բայց երբ 10 մարզիկներով մնացինք, չվախցայ, բայց փոխեցի խաղաոճը: Մրցումի ընթացքին երեք անգամ փոխեցի խաղաոճը՝ փորձելով, որ խումբին օգնեմ: Մօտ էինք արդիւնքը պահելու 0-0: Բայց այս մրցումը մեծ փորձ էր, եւ մենք ճիշդ ճամբու վրայ ենք: Կարեւորը ոգին պահելն է, միասին ըլլալը եւ յառաջ շարժիլը», ըսաւ գլխաւոր մարզիչ Եղիշէ Մելիքեան:

13 եւ 16 նոյեմբերին, Հայաստան պիտի մրցի Հունգարիոյ եւ Փորթուգալի դէմ:

Անգլիա դարձաւ առաջին Եւրոպական խումբը, որ այժմէն իսկ ապահովեց Մոնտիալի իր տոմսը, երբ Ռիկայի մէջ 5-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Լաթվիան: 11-րդ խմբակին գծով այս մրցումին, Հերի Զէյն 2 կոլ նշանակեց, մինչ Անթոնի Կորուըն, Մաքսիմ Թոնիշէ (սխալմամբ իր բերդին մէջ) եւ Էպրեյնի Էջէ աւելցուցին Անգլիոյ մնացեալ կոլերը:

Փորթուգալի Մոնտիալի հասնելու թուականը 1 ամիսով յետաձգուեցաւ, երբ Լիվըրփուլի միջնապահ Տոմինիք Սոդոսլայ 92-րդ վայրկեանին նշանակեց Հունգարիոյ հաւասարութեան



կոլը (2-2) Լիզպոլի մէջ: Քրիսթիանօ Ռոնալտօ 40 տարեկանին տակաւին կը փայլի եւ մրցանիշներու գիրքին մէջ բոլոր Էշերը լեցնելու փորձին մէջ է: Ռոնալտօ 2 կոլ նշանակելով դարձաւ առաջին մարզիկը, որ Մոնտիալի գտումներու մրցումներու պատմութեան ընթացքին 40 կոլ կը նշանակէ: Նախկին մրցանիշը կը պատկանէր Կուաթեմալայի մարզիկ Զարլոս Ռուիսի, որ 39 կոլ նշանակած էր: Ռոնալտօ 41 կոլերով կրցաւ բարելաւել կոլերու հաշիւը իր կատարած 51 մրցումներուն ընթացքին: Եւրոպայէն հարաւ՝ Ափրիկէի գտումի մրցումներուն, Փոլսկրեայ Ափունք 3-0 արդիւնքով յաղթել ետք Զենիոյ իր կարգին ապահովեց Մոնտիալի իր տոմսը: Հարաւային Ափրիկէ 3-0 արդիւնքով յաղթեց Ռուանտային եւ իր կարգին հասաւ Մոնտիալ:

Մենեկալ իր կարգին միացաւ Մարոքին, Թունիզի, Եգիպտոսին, Կանային եւ Զափէ Վերտէին՝ հասնելով Մոնտիալին: Անիոյ գօտիին մէջ, Զաթար ապահովեց Մոնտիալի իր տոմսը՝ պարտութեան մատնելէ ետք Արաբական Միացեալ Եմիրութիւնները, մինչ Սեուտական Արաբիա յաջորդաբար 3-րդ անգամ ըլլալով պիտի մասնակցի Մոնտիալին՝ Իրաքի հետ ճերմակ հաւասարութենէ ետք:

Ստորեւ կը ներկայացնենք Եւրոպայի մէջ արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումները.

Իրլանտա - Հայաստան 1-0
Լաթվիա - Անգլիա 0-5
Թուրքիա - Կրաստան 4-1
Անտորրա - Սերպիա 1-3
Իտալիա - Իսրայէլ 3-0
Փորթուգալ - Հունգարիա 2-2
Սպանիա - Պուլկարիա 4-0
Եսթոնիա - Մոլտովա 1-1



ԴԱՍԱՌՈՐՈՒՄ
Ա. ԽՄԲԱԿ
1.- Գերմանիա 9 (8-3)
2.- Սլովաքիա 9 (5-2)
3.- Հիւսիսային Իրլանտա 6 (6-5)
4.- Լիքսամպուրկ 0 (1-10)

Բ. ԽՄԲԱԿ
1.- Չուիցերիա 10 (9-0)
2.- Քոսովօ 7 (3-4)
3.- Սլովենիա 3 (2-5)
4.- Շուէտ 1 (2-7)

Գ. ԽՄԲԱԿ
1.- Դանիա 10 (12-1)
2.- Սկովտիա 10 (7-2)
3.- Յունաստան 3 (7-10)

4.- Պիեմոնտիա 0 (2-15)

Դ. ԽՄԲԱԿ
1.- Ֆրանսա 10 (9-3)
2.- Ուքրանիա 7 (8-7)
3.- Իսլանտա 4 (11-9)
4.- Ազրպէյճան 1 (2-11)

Ե. ԽՄԲԱԿ
1.- Սպանիա 12 (15-0)
2.- Թուրքիա 9 (13-10)
3.- Կրաստան 3 (6-9)
4.- Պուլկարիա 0 (1-16)

Զ. ԽՄԲԱԿ
1.- Փորթուգալ 10 (11-4)
2.- Հունգարիա 5 (8-7)
3.- Իրլանտա 4 (4-5)
4.- Հայաստան 3 (2-9)

Է. ԽՄԲԱԿ
1.- Նետերլանտներ 16 (22-3)
2.- Լեհաստան 13 (10-4)
3.- Ֆինլանտա 10 (8-13)



4.- Լիթւանիա 3 (6-11)
5.- Մալթա 2 (1-16)

Ը. ԽՄԲԱԿ
1.- Աւստրիա 15 (19-3)
2.- Պոնսիա 13 (13-5)
3.- Ռումանիա 10 (11-6)
4.- Կիպրոս 8 (11-9)
5.- Սան Մարինօ 0 (1-32)

Թ. ԽՄԲԱԿ
1.- Նորվեկիա 18 (29-3)
2.- Իտալիա 15 (18-8)
3.- Իսրայէլ 9 (15-19)
4.- Եսթոնիա 4 (7-17)
5.- Մոլտովա 1 (4-26)

Ժ. ԽՄԲԱԿ
1.- Պէժիքա 14 (21-6)
2.- Հիւսիսային Մակեդոնիա 13 (12-3)
3.- Կալէն 10 (13-10)
4.- Ղազախստան 7 (8-12)
5.- Լիխթենշթայն 0 (0-23)

ՃԱ. ԽՄԲԱԿ
1.- Անգլիա 18 (18-0)
2.- Ալպանիա 11 (6-3)
3.- Սերպիա 10 (7-7)
4.- Լաթվիա 5 (4-13)
5.- Անտորրա 1 (3-15)

ԺԲ. ԽՄԲԱԿ
1.- Խրուաթիա 16 (20-1)
2.- Չեխիա 13 (12-8)
3.- Ֆարօ Կղզիներ 12 (10-6)
4.- Մոնթենեկո 6 (4-13)
5.- Ճիպրալթար 0 (2-20)

ՄԵՍՍԻԻ ԵՒ ՄՈՒԱՐԵՍԻ ԹԻԻԵՐԸ..

«Էմ. Էլ.Էս.»-ի խնայեանութեան ընդհանրապէս կը փայլին Եւրոպայի վեթերան մարզիկները կամ մարզիկներ, որոնք Եւրոպայի մէջ փայլած են եւ պարզապէս կ'ուզեն ֆուլթայլ շարունակել ոչ շատ բարձր մակարդակի վրայ: Պարագան նոյնն է Լիոնել Մեսսիի, որ Պարսելոնայի իր նախկին խմբակիցները Ինթեր Մայնի բերելով կը փորձէր խումբի սեփականատէր Տեյլիտ Պեք-համի հետ տիտղոսներ նուաճել:

Ինթեր Մայնի իր վերջին մրցումին 4-0 արդիւնքով յաղթեց Աթլանթա Եունայթըտին, եւ Մեսսի-Սուարես զոյգը տարբեր ձեւի թիւերու հասան:

38 տարեկան զոյգը ճիշդ է, որ հին օրերու կարողութիւնը չունին, բայց օրինակ՝ Մեսսի 2 կոլ նշանակեց, իսկ Սուարես կոլ մը աւելցուց, ինչ որ իր ասպարէզի 600-որդն էր: Մեսսի «Էմ.Էլ.Էս.»-ի նոր մրցանիշ իրագործեց 9 տարբեր խաղերու ընթացքին՝ մէկէ աւելի կոլեր նշանակելով:

Սուարես Պարսելոնայի հետ 198 կոլ նշանակած է, Այաքս Ամսթերտամի հետ՝ 111, Լիվըրփուլի հետ՝ 82, Ուրուկուէյի Ազգային խումբին հետ՝ 69, Ինթեր Մայնիի հետ՝ 42, Աթլէթիքօ Մատրիտի հետ՝ 34, Նասիոնալի հետ՝ 20,



իսկ Կրոնիսկընի հետ՝ 15 կոլ:

Սուարես միացած էր Ինթեր Մայնիին՝ անցեալ տարուան յունուարին, եւ անոր պայմանագրութիւնը նախատեսած է մինչեւ 31 դեկտեմբեր:

Նշենք, որ Ինթեր Մայնի 62 կէտով կը գրաւէ Արեւելեան շրջանի դասաւորման 3-րդ դիրքը, մինչ Աթլանթա Եունայթըտ 27 կէտ ունի եւ կը գրաւէ 14-րդ դիրքը:

Մեսսիի խմբակիցներ Սերէլիօ Պուսքեթը եւ Ժորտի Ալպա որոշած են եղանակի աւարտին լքել ֆուլթայլի ասպարէզը:

ԵԱՄԱԼԸ ԶԵՈՔ ԶԳԵԼՈՒ ԹԻԻԵՐԸ ԾԻՇԴ ԵՆ...

Պարսելոնայի սպանացի յառաջապահ Լամին Եամալ կրնայ դառնալ ֆուլթայլի պատմութեան ամենէն «սուղ» խաղացողը:

Ըստ «Տեֆենսա Սանթրալ»-ի Փարիզ Սեն Ժերմեն պատրաստ է 18 տարեկան ֆուլթայլիստին համար վճարելու 230 միլիոն եւրօ: Եթէ փոխանցումը իրականանայ, ան կրնայ համաշխարհային նոր մրցանիշ իրագործել: Այժմու ամենէն «սուղ» փոխանցումի արժէքը Նեյմարի տեղափոխումն էր Պարսելոնայէն Փարիզ Սեն Ժերմեն՝ 222 միլիոն եւրոյի փոխարէն:

Ըստ աղբիւրին, Նասեր Խելայֆի (Փարիզի նախագահ) կը ցանկայ Եամալը բերել ակումբ եւ կը պայքարի ասոր համար:

Նախապէս Ժոան Լափորթա (Պարսելոնայի նախագահ) յայտնած էր, որ Փարիզ Սեն Ժերմեն լրջօրէն հետաքրքրուած



էր Եամալի փոխանցումով:

Հակառակ այս բոլորին, Եամալ այս ամրան երկարաձգած էր իր պայմանագիրը, որ նախատեսուած է մինչեւ 2031 թուական:

Հարցը հոն է, որ Պարսելոնա քանի մը տարիէ նկիթական տագնապի մէջ կը գտնուի, եւ մեծ գումարը կրնայ իրապուրիչ ըլլալ:

ԺԻՆՓԻՆԿԻ ԴԵՏ ԹՐԱՄՓԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԻ ԹՈՒԱԿԱՆԸ ՃՇՂՈՒԱԾ Է

Միացեալ Նահանգներու առեւտուրի ներկայացուցիչ Ճէյմս Կարիթը յայտնեց. «Հակառակ Թրամփի հանդիպումին նկատմամբ կասկած արտայայտելուն, Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի եւ անոր չին պաշտօնակից Շի Ժինփինկի միջեւ հանդիպումին ժամանակը ճշդուած է»:

«Հագուագիւտ մետաղներու արտածումներուն վրայ չինական հսկողութեան քայլերը չափազանցուած են, եւ անոնք յանկարծ ոչինչէն երեւան եկան», նշեց Կարիթը:

Ան լաւատեսութիւն յայտնեց այս հարցով Չինաստանի հետ տարակարծութիւններու կարգաւորման նկատմամբ եւ նշեց. «Անցեալին յաջողեցանք անոնց հետ յառաջ ընթանալու ուղի գտնել, ուստի կը կարծենք, որ այս մէկը եւս պիտի կարենանք շրջանցել»:

Միացեալ Նահանգներու նախագահը Նախապէս կասկած յայտնած էր Հարաւային Զորեայի մէջ Հարաւարեւելեան Ասիոյ պետութիւններու միութեան՝ ԱՄԵԱՆ-ի վեհաժողովի ծիրին մէջ Չինաստանի նախագահ Շի Ժինփինկի հետ իր հանդիպումի կայացման նկատմամբ, ամերիկեան շարք մը զգայուն ճարտարարուեստներու վրայ ազդեցութիւն ունեցող հագուագիւտ մետաղներու արտածման վրայ խիստ հսկողութիւն հաստատելու չինական որոշումին պատճառով:

Նախապէս «Ֆայնենշլը Թայմզ»-ը եւս գրած էր, թէ Թրամփ-ժինփինկ հանդիպումը կրնայ տեղի չունենալ: Օրաթերթը գրած էր, թէ Միացեալ



Նահանգներու պաշտպանութեան նախարար Փիլի Յէկսթը եւ արտաքին գործոց նախարար Մարքո Ռուպիօն նախապէս բանակցութիւններ վարած են իրենց չին պաշտօնակիցներուն հետ, ինչ որ յառաջացուցած է ենթադրութիւններ, թէ նախագահները պիտի հանդիպին:

Բայց եւ այնպէս, Միացեալ Նահանգներու եւ Չինաստանի միջեւ առեւտրական բանակցութիւններուն մէջ յառաջընթացի բացակայութիւնը նուազեցուցած է Փեքինի մէջ վեհաժողովի հաւանականութիւնը:

Թրամփ եւ ժինփինկ տակաւին կըրնան հանդիպիլ Ասիա-Խաղաղովկիանոսեան տնտեսական համաժողովի վեհաժողովին մէջ, սակայն հանդիպումը պակաս նշանակալից պիտի ըլլայ:

Հիմնական խնդիրը այն է, որ Ուաշինկթըն կը կարծէ, որ Չինաստանը կը շարունակէ Միացեալ Նահանգներուն ֆէնթանիլի արտադրութեան մէջ օգտագործող Նիւթեր մատակարարել, իսկ Փեքին, իր կարգին, մտահոգ է Միացեալ Նահանգներու կողմէ սահմանուած մաքսատուրքերով:

ԺԱՊԵՐ. «ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԻՆԸ...»

Շարունակուած 2-րդ էջէն

«Լիբանան խաչմերուկի վրայ կանգնած է եւ հսկայական մարտահրաւերներ կը դիմագրաւէ, սակայն վըճռական է առողջացման ճամբով ընթանալու»:

Ան միջազգային ընտանիքին կոչ ուղղեց՝ օժանդակութիւններու տրամադրման շտապելու եւ քաղաքակաւութիւնը մարդկային կարիքներէն առաջնահերթ չնկատելու:

Ժապեր նշեց, որ Լիբանան, հակառակ իր աննախադէպ ելեմտական ճգնաժամին եւ անոր ազգային դրամանիշին իր արժեքին 90 առ հարիւրը

կորսնցնելուն, տակաւին յանձնառու է միջազգային իր համաձայնութիւններուն եւ կը շարունակէ իր մասնակցութիւնը բերել համաշխարհային առեւտուրի շարժումին:

«Լիբանանի միջազգային ընտանիքէն խնդրածը բարեգործութիւն չէ, այլ իսկական գործընկերութիւն, որ կը վերականգնէ պետութեան հաստատութիւններուն ու անոր տնտեսութեան նկատմամբ վստահութիւնը եւ ժողովուրդին աւելի լաւ ապագայի նկատմամբ յոյս կը ներշնչէ», յայտարարեց ելեմտալեզու նախարարը:

ՁԵՐԱԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ...

Շարունակուած Ա. էջէն

Թէ ո՞րն է ձերբակալութիւններուն պատճառը, Մայր աթոռի Ս. Էջմիածինի բանքեր Եսայի քիչը. Արթեսեան ըսաւ, որ իրենք մանրամասնութիւններէն տղեակ չեն, եւ որ իրենք ալ պէտք է որոշ պարզաբանումներ ստանան: Ամէն պարագայի Մայր աթոռի տեղեկատուական համակարգի տնօրէնը բարձրաստիճան հողեւորականներու ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները կը դիտարկէ իշխանութիւն-եկեղեցի հակամարտութեան շրջանակին մէջ:

«Ուրիշ այլ շրջանակ չենք տեսներ, բնականաբար եկեղեցւոյ դէմ արշաւի շրջանակներուն մէջ կը մըտնէ», ըսաւ Մայր աթոռի բանքերը:

Արագածոտնի թեմի առաջնորդ Սկրտիչ եպս. Պոռշեանի գտնուելու վայրը քանի մը ժամ անյայտ

էր: Զննչական կոմիտէն կը հրաժարէին ըսել, թէ ուր է ան: 7 ժամ ետք մարդու իրաւունքներու պաշտպանի օգնութեամբ յայտնի դարձաւ, որ ան կը գտնուի Զննչական կոմիտէի Կենտրոնի բաժնին մէջ:

Աւելի ուշ հաղորդուեցաւ նաեւ, որ բերման ենթարկուած չորս քահանաներու՝ տեր Համբարձումի, տեր Նարեկի, տեր Սարգիսի եւ տեր Օշինի գտնուելու վայրը եւս անյայտ է:

Կը հաղորդուի, որ Նախքան բերման ենթարկելը կանոնաւորաբար խուզարկութիւններ եղած են հողեւորականներու տուններուն եւ Արագածոտնի թեմի առաջնորդարանին մէջ:

Աւելի ուշ մեղադրանք ներկայացուեցաւ Արագածոտնի առաջնորդ Սկրտիչ եպս. Պոռշեանի դէմ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՈՒՄԴԵՏԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. էջէն

Հովուապետական յիշեալ այցելութեան վեհափառ հայրապետին մայրավանքէն կ'ընկերանան կաթողիկոսարանի տեղեկատուական բաժանմունքի վարիչ Յովակիմ վրդ. Բանճարճեան, գաւազանակիր եւ քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան բաժանմունքի պատասխանատու Սարգիս վրդ. Աբրահամեան, յիշեալ երեք թեմերու առաջնորդ սրբազան հայրերը՝ Բաբգէն արք. Չարեան, Անուշաւան արք. Դանիէլեան եւ Գեղամ արք. Խաչերեան, Արեւմտեան թեմի պարագային նաեւ՝ Մուշեղ արք. Մարտիրոսեան, Թորգոմ արք. Տօնոյեան եւ կաթողիկոսարանի դիւանա-

պետ Տաճատ եպս. Աշըգեան: Իսկ Քանատա այցելութեան, վեհափառ հայրապետի պատուիրակութեան մասս պիտի կազմէ Ազգային կեդրոնական վարչութեան անդամ տոքթ. Ժիրայր Պասմաճեան, Արեւմտեան թեմի պարագային՝ Ազգային կեդրոնական վարչութեան համալսարանապետներ Գրիգոր Մահերճեան ու Ստեփան Տէր Պետրոսեան եւ անդամներ՝ Կայծակ Չէթլեան, Ռոստոմ Այնթապեան եւ Հրաչ Յակոբեան:

Վեհափառ հայրապետը Անթիլիասի մայրավանք պիտի վերադառնայ 22 նոյեմբերին:

ՔՐԵՍԼԻՆԻ ՄԵՋ ՓՈՒԹԻՆ-ՇԱՐՅ...

Շարունակուած Ա. էջէն

Սուրիական պաշտօնական աղբիւր մը լրատու գործակալութեան յայտնած է, որ Շարի կը պատրաստուի բանակցութիւններ վարել Թարթուսի մէջ Ռուսիոյ ծովովի ռազմակայանի եւ Հմէմիմի մէջ զըտնուող օդուժի ռազմակայանի շարունակական ներկայութեան վերաբերեալ:

Սուրիոյ նախագահը Փութինի հետ հանդիպումը ընթացքին իր կարգին նշեց. «Նոր Սուրիան բոլոր շըրջանային ու միջազգային պետութիւններուն հետ յարաբերութիւնները վերստին կը հաստատէ, եւ Սուրիան ու Ռուսիան զիրար կապող երկկողմանի յարաբերութիւններ ու հասարակաց շահեր գոյութիւն ունին, եւ մենք կը յարգենք անոր հետ կնքուած բոլոր համաձայնութիւնները»:

ԹՐԱՄՓ. «ՀԱՄԱՍ ՊԻՏԻ ԶՐԱԺԱՐԻ...»

Շարունակուած Ա. էջէն

Սպիտակ տան ղեկավարը նաեւ խօսեցաւ Վենեզուելայի Միացեալ Նահանգներ թմրեցուցիչ փոխադրող նաւակներու թիրախաւորման ծիրին մէջ նոր հա-

ցանցերուն: Ան ահաբեկչական որակուած կազմակերպութեան մը ծանօթ ուղիէն կ'ընթանար», ըսաւ Թրամփ:

Զմամառու Պատրիարքական Կոթրի Միաբանութիւն

ԻՄԱԾԻՈՍ ՄԱՆՈՅԵԱՆԻ ՍՐԲԱՂԱՍՏԱՆ ԱՐԱՐՈՐՈՒԹԻՒՆ

Կիրակի 19 Հոկտեմբեր 2025 | Զմամառու Մայրավանք

10:00 | Ս. եւ Աննահ Պատարագ

11:00 | Ուղիղ եթեր - Սրբաղասման հռչակում Վատիկանի Ս. Պետրոս Զրապարակէն

12:00 | Տօնակատարութիւն, այցելութիւն Ս. Իգնատիոս Մալյոյեանի նուիրուած թանգարան

Փոխադրամիջոցները ապահովուած են: Դիմել Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններուն:

ՍԻՆԻՈՐԱ 2ԷՆՔԻ ...

Շարունակուած 2-րդ էջէն

«Գոյութիւն ունին նպաստաւոր ազդակներ, գորս պէտք է ապահովել գէնքի մենաշնորհման լիբանանեան կառավարութեան որոշումի ճիշդ գործադրման համար: Անիկա որոշում մըն է, որուն պէտք է վըճռականութեամբ կարգի լիբանանեան կառավարութիւնը, սակայն միեւնոյն ժամանակ պէտք է իմաստութեամբ եւ Հըզպալլայի հետ գործակցութեամբ վարուի, ինչպէս նաեւ Հըզպալլայի շրջապատին ձեռք երկարէ՝ հասնելու համար այս կարելոր որոշումին գործադրութեան, որ բոլոր լիբանանցիներու շահերուն, ինչպէս նաեւ Հըզպալլայի շրջապատի շահերուն կը ծառայէ»:

ԱՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 Է 95 MHz

7.00- Զայլերգներ
7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս
7.15- Հանդարտ Բարի
7.30- «Բարեւ»
8.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ
9.00- «Բարեւ» հարցազրոյց. հիւր՝ Յասմիկ Դանիէլ (Նիւթ՝ «Մտային առողջութիւն», **ուղիղ՝ դիմատետրով**)
9.30- «Բարեւ»
10.00- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ
10.30- Հայկական աշխարհի Լուրեր
10.45- Հայրենի սիրուած երգեր
11.00- «Օրակարգ», հիւր՝ Ռազմիկ Արամեան (**ուղիղ՝ դիմատետրով**)
11.30- Հայրենի սիրուած երգիչներու կատարումներ
12.00- «Հայագիտակ» («Անտեանցներ՝ երեանի գարեջուրի մշակոյթի հիմնադիրներ»)
12.20- Ժողովրդային երգեր
1.00- Ազգային-հայրենասիրական երգեր
1.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ
2.00- «Յիշատակելիները» (Սարգիս Արարատեան)
2.05- Յեղափոխական երգեր
3.00- «Ըըլ եմ պիոյմու» (**ուղիղ՝ դիմատետրով**)

4.00- «Մուպատարաթ». հիւր՝ Ֆաթիմա Պատրա (**ուղիղ՝ դիմատետրով**)
4.30- Արաբերէն երգեր
5.00- «Վանայ Զայն»-ը երեկոյեան
5.05- «Լիբանանահայ երգչախմբային արուեստը»
5.30- Նոր երգեր
6.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ
6.50- Լիբանանահայ երգիչներու կատարումներ
7.00- «Հաւատք եւ կեանք». հիւր՝ Անդրանիկ Վրդ. Զիրիմեան (Նիւթ՝ «Եղբայրդ մի՛ ատեր», **ուղիղ՝ դիմատետրով**)
8.00- Օրուան երգիչ (Պելլա Դարբինեան)
8.30- Juke Box
9.00- Դասականներ
9.30- Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
9.45- Աշուղական երգեր
10.30- Չուգերգներ
11.30- Ազնաւուրի կատարումներ
12.00- «Յիշատակելիները» / Յեղափոխական երգեր
2.00- «ԳՈՅԱՐ» համոյթի կատարումներ
3.00- Կրկնութիւններ
5.00- Այլազան երգեր
6.00- Հանդարտ երաժշտութիւն

Չոր մնայուն ընկերակից

Radio Voice of Van